



ԽԱՆՃԱՄՈՒՆ ԿՐՈՎՅԱՆ

Պարապ վախտի խաղալիք

Չրդրեխը

(Բամբակի հունդը հանելու հաշար)

Մեկ քրդրստանցի անմեղ հայ մշակ
Տուն ու տեղ թողած՝ Էկավ մեկ քաղաք,
Որ չրդրեխ քաշի, մի քիչ փող դատի,
Գնա, որ իր խեղճ օղլուշաղն պահի:
Չրդրեխի անունն էր մենակ լրսել,
Աչքով չէր տե՛սել, հունարն իմացել:
Չրդրեխ ու տրդրեխ հենց գիտեր մեկ ա,
Միտքը մոլորված՝ նա քուշա քուշա
Որ ման էր գալիս, մեկ մարդ ոաստ Էկավ:
Աչքիցն ու ունքից նա չափեց, տեսավ,
Որ էս օրհնածն իր ատամի խարջ ա:
«Ախպե՛ր՝ քո խոքուն դուրքան Էղնիմ՝ խա՛յ՛
Չրդրեխն՝ որ կրսեն, էս ի՞մալ գատ ա:
Չոջուխ ու լաջերս տուն եմ վորնդել,
Զըմեն ֆուխարա մեր օլքեն թորգել,
Քալել ես վալիաթն, օր չրդրեխ քաշեմ,
Տանիմ գիմ քուլվաթն պախենմ, կերակրեմ»:
Սատանա մարդին գագ, կշեռք պետք չի՛,
Աչքով նա մարդի խելքը կըչափի:

Գըլխին խելք դըրեց, որ գնա, մոն առնի,
 Տանի չը՛ղրեխի չորս կողմը վառի,
 Առաջին չորի, դեմ համբուրի,
 Դեմ չըղրեխի կոթը պտըռաի:—
 Շուտով վագըվագ գնաց, մներն առավ,
 Ու արդար սրտով նա իր ուխտն էկավ:
 Ինչպես ասել էր, մները վառեց,
 Չոքեց առաջին ու խաչակնքեց:
 Բայց վա՛յ նրա օրին . կոթն էլ որ չքաշեց,
 Էն դաստա միրուքն էլ հետը ծալվեց:
 Ի՞նչ վնաս ունի, միրուքն ո՞վ կուտի,
 Չըղրեխն կատու չէր, որ երեսն չանգոի:—
 Խեղճ քրդատանցին Էնպես իմացավ,
 Թե դեռ չըղրեխի վախտը չի հասավ,
 Որ մուրագը տա, իրան ռադ անի,
 Չոքելով էլ՝ ջուրն եկավ ծնկների:
 Առաջ հլա կամաց սկսեց ասիլ,
 «Յամա՛ն սուրբ չըղրեխ՝ քզի եմ խանչել,
 Չիմ մորուս սաղաղ՝ քեզ ապավինել:
 Թո՛րգ զիմ մորուս՝ թո՛րգ՝ քեզ դուրբան եղնիմ .
 Թո՛րգ,— թո՛րգ,— հա՛յ յաման՝ արևուդ մեռնիմ,
 Քզի մեկ ուլ մը ես մատաղ կենեմ,
 Չիմ մորուսը թորգ. որ խազանջ Էնեմ»:—
 Չըղրեխ ի՞նչ տեղ էր քըրդեվար սովրել,
 Որ կարենար նրա աղոթքը լըսել:
 Դոյմադոչում դու մեր քրդատանցի,
 Գիժ կովի նման կաթըդ շուռ ածի,
 Թո՛րգ, թո՛րգ ասելով՝ որ գարբ չի արեց:
 «Չքո շինողի խերը անիծեմ,
 Չքո բունիաթի փիրը նգովեմ,
 Խուլ մի, գեշ խաջաթ խմա մեջ ձգել,
 Ուխտ կըսեն. երե . գլխուն խռովել.
 Չմլա դմբլակի պտուղն խավարի՛,

Մեր սաքվի քեռթուկն էստուց աղեկ կրլի»։—
Ասեց ու հետը միրուքը քաշեց,
Թափեթափ տալով, պռոշը կծեց:
Չըղրեխը մնաց միրքիցն ճուղակ,
Անեծք ու օրհնանք խառնեց մեր մշակն
Չըղրեխն անեծքին ի՞նչ մտիկ տար,
Թե գլուխն էլ հետը մեր քրդի պոկ գար:
Ընչանք անիծածն թողեց խերն ու շառը
Միրքի կեսն ու բեղն հենց էնպես ձար, ձար
Պոկեց, պլոկեց, տարավ քրդի չարը:—
Աստված ո՛չ տա՝ մարդ էնպես տեղ ընկնի,
Որ խրրատ տվողն էլ սատանա ըլի:
Թե չէ է՛ն չըղրեխն կրկապեն միրքիդ,
Որ չես պրծընիլ, թե տաս էլ հոգիդ: